22598

# ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

331
S-29

331
Տ-29
05 JAN 2010
05 FEB 200

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ГОС...БИБЛИОТЕКА ТССР
ИНВ. № 371/1

ՅԵՐԵՎԱՆ — 1938

13.08.2013

22598

43162-63

Գլավլիտ № 6590, Պատվեր 478, տիրաժ 200

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

## ՑԵՍԶԻ ՈԳՆԱԿԱՆԻ (ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԴԻՐԵԿՏՈՐԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Տեխնիքական ղեկավար տեսչի ոգնականը ղեկավարում է՝

ա) ձեռնարկության վողջ արտադրական-տեխնիքական գործունեությունը, նույն թըվում մեխանիկական և շինարարական մասը, արտադրության ռացիոնալիզացիայի և կազմակերպչորեն բարելավելու ուղղությամբ կիրառում է և աշխատանքի կատարելագործված դինամիկ մեթոդներ՝ ինքնարժեքի իջեցման և արտադրանքի վորակի լավացման նպատակով։

2) Հսկում է ձեռնարկության իրեն յենթակա մասերի գործունեության վրա, մասնավորապես՝

ա) արտադրական, հեռանկարային ծրա-

գրերի մշակման վրա, նոր գյուտարարու-
թյունների նախահաշիվների, ծրագրերի և
նախագծերի (եթե այդպիսիք մշակվում են
ձեռնարկությունում), հիմնական վերանո-
րոգման, արտադրության ռացիոնալիզացիա-
յի, վերակահավորման և ձեռնարկության
իրեն ենթակա մասերի ու բաժինների աշ-
խատանքների վրա.

բ) արտֆինպլանների արտադրական-
տեխնիկական մասի ծրագրերի, նոր գյուտարա-
րությունների ծրագրերի, հիմնական վերա-
նորոգման, առանձին պատվերների կատարման
ժամկետների, արտադրանքի որակի. նյու-
թերի ծախսման նորմաների համույթի, է-
լեկտրոէներգիայի, բանուժի, վառելիքի ծախ-
սերի վրա.

գ) մատակարարման տարեկան, սեզո-
նային, յուրամսյակային և ամսական ծրագ-
րեր կազմելու, ինչպես նաև անհրաժեշտ մե-
քենաների պատվերներ տալու վրա, համա-
ձայնեցնելով պատվերները ձեռնարկության
մատակարարման բաժնի հետ:



3) Տեխնիկական մասով տեսչի ղեկավարը
վորոշում է ձեռնարկության կողմից ընդու-
նած պատվերների տեխնիկական, արտադրա-
կան տնտեսական նպատակահարմարությունը
և նրանց կատարման ժամկետը: Մասնակցում
է արտադրանքի ինքնարժեքը սահմանելու աշ-
խատանքներին, սահմանում է մեքենաների
ցանկայան մանրիկների, գործիքների և այլն
համար ուրիշ ձեռնարկություններին պատ-
վերներ տալու անհրաժեշտության հարցը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Վերցված պատվեր-
ների տնտեսական նպատակահարմարու-
թյունը սահմանում է տեսչի ղեկավարը—
տեխնիկական գծով, համաձայնեցնելով
ձեռնարկության մառ- իրացման բաժնի
վարիչի հետ:

4) Տեխնիկական գծով տեսչի ղեկավարի
հետ պետք է համաձայնեցվի աշխատանքի
տեխնիկական չափավորման (նորմիրովկա-
յի), տեխնիկական անվտանգության ծրա-

գիրն ու աշխատանքի հաշվարդականությունը· Տեսչի օգնականը հսկում է համապատասխան աշխատանքների և սահմանված արտադրական նորմաների կատարման վրա այն հաշվով, ինչ չափով վոր դա վերաբերում է ձեռնարկության արտադրական–տեխնիքական և մեխանիքական մասին:

5) Տեսչի տեխնիքական գծով օգնականը համապատասխան բաժինների միջոցով սիստեմատիկորեն հսկում է տեխնիքական կահավորության ապահով և համապատասխան վիճակի մեջ պահվելուն, ձեռնարկության ելեկտրական և այլ մասերի անխափան աշխատանքներին, ինչպես նաև հսկողություն է ունենում հումույթի, պահապան նյութերի, պատրաստի արտադրանքի ընդունման և պահպանման գործի վրա:

6) Տեսչի օգնականը տեխնիքական գծով պատասխանատվություն է կրում նախահաշիվների և նախագծերի ճշտության, արտադրական բոլոր պրոցեսների և շինարարության նպատակահարմար կազմակերպման, ինչպես



նաև արտադրանքի վորակի և ինքնարժեքի համար:

## ԳԼԽԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Գլխավոր մեխանիկը ղեկավարում է իրեն յենթակա ապարատը, ինչպես նաև ձեռնարկության բոլոր արտադրական միավորների մեխանիկներին, ելեկտրո–տեխնիկներին այն դեպքերում, յերբ վարչական կարգով նրանք յենթարկվում են ձեռնարկության համապատասխան բաժինների ղեկավարներին:

2) Գլխավոր մեխանիկը ղեկավարում է մեքենաների, մեքենայական կահավորման վերանորոգման, կապիտալ և նոր շինարարության ծրագրեր կազմելու աշխատանքները· հսկում է նրանց կատարման վրա:

3) Գլխավոր մեխանիկը հսկում է ինչպես ցեխերի, նույնպես և ընդհանուր գործարանային մեխանիկական և ելեկտրո–կահավորման լավ վիճակի, ժամանակին վերանորոգման, նպատակահարմար օգտագործման

վրա · ինչպիսիք են՝ շոգեկաթսաները, էլեկտրական կահավորումը, ջրի և էլեկտրական մատակարարման, ջերմատար, տրանսմիսիոն, վենտիլյացիոն և այլ սիստեմները, մեքենաները, բոլոր տեսակի բեռնատար միջոցները, հակահրդեհային, հեռախոսային, ազդանշանային սարքերը · պարզել նրանց վնասվելու պատճառները և միջոցառումներ մշակել հայտաբերված թերությունները վերացնելու համար:

4) Գլխավոր մեխանիկը ղեկավարում է կահավորման բոլորի՝ տեխնիքական էսքիզների, պլանների գծագրությունների ըստուգման, ինչպես նաև շոգետար և էլեկտրոսարքավորման պարբերաբար ու ընդհանուր ստուգումների աշխատանքները, որի համար ձեռնարկության տեսչի թույլատվությամբ և նրա տեխնիքական գծով ոգնականի ցուցմունքով ներգրավում է հատուկ ձեռնարկությունների և մշակում է համապատասխան միջոցառումներ վերացնելու համար բոլոր այն թերությունները, որոնք կհայ-



տարեկան նման ստուգումների ընթացքում:

Ծանոթություն՝ սույն հոդվածով նախատեսված իրավունքը տեսուչը կարող է վերապահել տեխնիքական գծով իր ոգնականին:

5) Տեխնիքական գծով տեսչի ոգնականի և տեսչի հաստատությամբ գլխավոր մեխանիկը կատարում է նոր մեխանիկական սարքավորման ընդունություն ընդհանուր գործածության համար:

6) Ամեն տեսակի մեխանիկական սարքավորման, նոր մեքենաների ընդունումը կատարվում է գլխավոր մեխանիկի կամ այս առթիվ լիազորված հատուկ անձնավորության կողմից:

7) Գլխավոր մեխանիկը հսկում է, որ տեղի չունենա էլեկտրոէներգիայի, շոգու նախահաշվային արժեքի գերածախս, իսկ այն դեպքերում, երբ կահավորումը և բոլոր շարժական մեխանիզմները գտնվում են բացառապես նրա իրավասության տակ,

հսկում է էլեկտրաէներգիայի, վառելիքի, զանազան նյութեղենի խնայողաբար և նպատակահարմար ծախսելու վրա:

8) Գլխավոր մեխանիկը հսկում է, որ աշխատանքի անվտանգության տեխնիկայի համար բաց թողնված հատուկ վարկերի սահմաններում, կազմած պլանների համաձայն, ժամանակին և անպայման կիրառվեն այն միջոցառումները, որոնք վերաբերում են մեքենաների պատրաստմանը, սարքելուն, նրանց վերանորոգմանը և այլ նախազգուշական միջոցառումներին:

9) Գլխավոր մեխանիկը պետք է մասնակից արվի բոլոր այն աշխատանքներին, երբ մշակվում են հրահանգներ մեխանիկի իրավասության տակ գտնվող մեքենաների պահպանման և խնամքի կարգի մասին:

10) Գլխավոր մեխանիկը մասնակցում է ձեռնարկության ամբողջ կահավորման հաշվառումը կատարելու առթիվ միջոցառումներ մշակելու աշխատանքներին:

11) Գլխավոր մեխանիկին իրավունք է



վերապահված պլանային-արտադրական բաժնի միջոցով որացուցային համապատասխան նախահաշիվների և ծրագրերի սահմաններում պատվերներ և պահանջներ այլ ձեռնարկության ուրիշ բաժիններին՝ մեքենաների անհրաժեշտ մասնիկների, գործիքների, արտադրության և օժանդակ նյութերի աշխատանքների կատարման համար:

## ՑԵԽԻ ՎԱՐԻՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Ցեխի վարիչը ղեկավարում է ցեխի ողջ վարչական-տեխնիկական և տնտեսական գործունեությունը, մասնավորապես՝

ա) համագործարանային պլանային մարմինների կողմից տրված առաջադրանքների, ծրագրերի, հրահանգների կատարումը.

բ) արտադրական պրոցեսների կազմակերպումը, աշխատանքի բաշխումը, արտադրական միջոցների պահպանումը, սահմանում է արտադրանքի պատրաստման կամ վե-

բաժշակման միջոցներ և առանձին օպերա-
ցիաների կատարման հաջողականություն.

գ) արտադրությունը վարել արտադրան-
քի ավելացման, վորակի լավացման և ինք-
նարժեքի իջեցման ուղղությամբ.

դ) նախապատրաստել ավյալներ ավյալ
ցեխի արտադրական ծրագրերը մշակելու,
կատարման ժամկետը նշելու, ցեխային նա-
խահաշվային ինքնարժեքի չափը սահմանե-
լու, ինչպես նաև հում նյութի, կիսաֆաբ-
րիկատի, բանվորական ուժի, գործիքների,
արտադրական օժանդակ նյութերի մատա-
կարարման հայտերը և նախահաշիվները
կազմելու համար:

2) Ցեխի վարիչը հսկում է՝

ա) արտադրության անխափան ընթաց-
քի, մեքենաների կահավորման և բանվորնե-
րի ճիշտ և նպատակահարմար ծանրաբեռն-
վածության վրա.

բ) մեքենաների, բանվորների պարա-
պուրդը առավելագույն չափով կրճատելու և



պարապուրդների ճշգրիտ հաշվառում կատա-
րելու վրա.

գ) տեխնիկական կահավորման, ունեց-
վածքի, իր իրավասության տակ գտնված
հումույթի, կիսաֆաբրիկատների, նյութե-
ղենի ապահով և համապատասխան վիճակի
մեջ գտնվելուն.

դ) իր իրավասության տակ գտնված
հումույթի, կիսաֆաբրիկատի, արտադրական
և օժանդակ նյութեղենի, գործիքների հա-
մար սահմանված պահեստի ֆոնդերի ան-
ձեռնմխելիության վրա, ինչպես նաև ձեռ-
նարկության համապատասխան բաժինների
միջոցով հսկում է համապործարանային
պահեստների վիճակի և նրանցում պահվող
անհրաժեշտ պահեստի ֆոնդերի առկայու-
թյան վրա.

ե) հումույթի, նյութեղենի, էլեկտրա-
էներգիայի, վառելիքի, բանվորական ուժի
նպատակահարմար և խնայողաբար ծախսելու,
խոտանի իսպառ վերացման, ցեխային ծախ-

քերի սահմանված չափից գերածախս չկատարելու վրա․

գ) ղեկավարվելով ներքին կարգապահության կանոններով պահպանել արտադրական-աշխատանքային անհրաժեշտ կարգապահություն:

3) Ցեխի վարիչը իրավունք ունի, իրեն յենթակա ցեխի համար հաստատված ծրագրերի և նախահաշիվների սահմաններում ձեռնարկության մյուս բաժիններին կամ յենթակա ձեռնարկություններին սահմանված կարգով տալ պատվերներ և պահանջներ՝ համապատասխան վերանորոգումներ, աժանդակ աշխատանքներ կատարելու, արտադրական և աժանդակ նյութերի, գործիքների և այլն պահեստի ֆոնդերը լրացնելու համար: Հսկել, վոր ժամանակին կատարվեն այդ պատվերներն ու պահանջները:

4) Ցեխի վարիչը կատարում է ցեխում ընդունվող իրերի վորակական դրության ստուգում, ըստ վորում նա իրավասու է



հրաժարվել անպետք, անվորակ իրերն ընդունելուց, մինչև վերադաս անձի կողմից հատուկ գրավոր առաջադրություն ստանալը:

5) Ցեխի վարիչը պարտավոր է գիտենալ ցեխի արտադրանքի ինքնարժեքի նախնական և փաստական կալկուլյացիան, կատարել նըրա ուսումնասիրություն և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հայտաբերվող թերությունները վերացնելու համար:

6) Ցեխի վարիչը հսկում է՝

ա) նախազգուշական և այլ միջոցների ճիշտ ոգտագործման և ժամանակին կյանքի բերելու վրա․

բ) տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման վրա․

գ) բանվորներին մեքենաների և կահավորման հետ ծանոթացնելու, ինչպես նաև անհրաժեշտ նախազգուշական միջոցներ դնելու վրա:

7) Ցեխի վարիչը կիրառում է իրեն են-

թակա ցեխի արտադրության տեխնոլոգիա-կան պրոցեսների ռացիոնալիզացիան, կազ-մակերպում է դրա համար անհրաժեշտ փոր-ձեր, օգտագործելով համապատասխան այդ նպա-տակի համար հատկացված գումարները:

8) Ցեխի վարիչը մասնակցում է արտֆին-պլանների մշակման և արտադրական տեխնի-կական ցուցանիշներ սահմանելու աշխատանք-ներին, ինչպես օրինակ՝ արտադրանքի քանա-կի, հումույթի, վառելիքի ծախսման և աշ-խատանքի արտադրողականության, ինքնար-ժեքի չափի որոշման և այլն:

9) Ցեխի վարիչը մասնակցում է արտա-դրանքի նորմաների գործարքային աշխատավար-ձի մշակման և սահմանման աշխատանքներին.

10) Ցեխի վարիչը պետք է օժանդակու-թյուն ցույց տա արտադրական խորհրդակ-ցությունների աշխատանքներին և կյանքում իրագործի արտադրական խորհրդակցություն-ների բոլոր այն որոշումները, որոնք նպա-տակահարմար կհամարվեն իր ցեխի համար:

## ՑԵՆԹՎԱՐՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Ցենթավարպետը հանդիսանում է ար-տադրության մեջ իրեն հանձնված կոմպլեկ-տի վարչական-տնտեսական ղեկավարը և աշ-խատանքի կազմակերպողը:

2) Ցենթավարպետները նշանակվում են ցեխի պետի կողմից գործարանի տեխնիքա-կան ղեկավարի հաստատելուց հետո, սակայն թեկնածությունը ներկայացվում է հերթային վարպետի միջոցով:

3) Ցենթավարպետը ղեկավարում է իրեն հանձնված կոմպլեկտի աշխատանքը և պա-տասխանատու է արտադրական առաջադ-րանքը կոմպլեկտի կողմից կատարելուն, ար-տադրանքի որակի բարձրացման, արտադրու-թյան ճիշտ կազմակերպման համար:

4) Ցենթավարպետներն ան[illegible] [illegible]-հանգում բանվորներին և ցույց են [illegible] նրանց անհրաժեշտ օգնություն: Հակառակ կոմպլեկտում արտադրության ընթացքի վրա [illegible]

431/62-63
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Համաձայն սահմանված տեխնոլոգիական պրոցեսի արտադրական կանոնի (ռեժիմի) և անմիջական միջոցներ են ձեռք առնում վերացնելու աշխատանքի մեջ յեղած բոլոր թերությունները՝ մեքենաների և գործիքների կարգի բերելը, բանվորների հրահանգումը, հում նյութի և օժանդակ նյութերի մատակարարելը: Այն դեպքերում, յերբ ցեխավարպետը իր սեփական ուժերով անկարող կլինի հաղթահարել յեղած դժվարությունները, նա պարտավոր է դիմել վարպետին:

5) Ցեխավարպետն անձամբ է հետևում մեքենաների սարքավորման և գործիքների պահպանման ու ճիշտ օգտագործման: Պարտավոր է պահպանել մեքենաների հանձնումը հաջորդ հերթի ցեխավարպետին, բարվոք վիճակում:

6) Ցեխավարպետը հսկում է իր կոմպլեկտի բանվորների մեջ հում նյութի, տեխնիկական օժանդակ նյութերի և գործիքների ճիշտ բաշխման վրա:



7) Ցեխավարպետը պարտավոր է գիտենալ իր կոմպլեկտի մեջ մտնող մեքենաների փաստական արտադրանքի, քանակական յեվ վորակական ցուցանիշների, ինչպես նաև արտադրանքի վորակական դրության մասին.

8) Պարտավոր է հսկել իր կոմպլեկտի բանվորների աշխատանքի դուրս գալու վրա և անմիջապես հայտնել վարպետին աշխատանքի դուրս չգալու բոլոր դեպքերի մասին. Ակտիվ պայքար է մղում աշխատանքի կարգապահության բարձրացման համար:

## ՀԵՐԹԱՅԻՆ ՎԱՐՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1) Հերթային վարպետը հանդիսանում է տվյալ հերթի աշխատանքի անմիջական կազմակերպողն ու ղեկավարողը. Նրան են յենթարկվում հերթում աշխատող բոլոր ցեխավարպետները: Նա պատասխանատու յե ինչպես առանձին կոմպլեկտների, նույնպես և հերթի պլանների քանակական, վորակական

ցուցանիշները կատարելու և արտադրանքի վորակի համար։

2) Հերթային վարպետն իր հերթի արտադրության ընթացքը ղեկավարում է միանձնյա, համաձայն այն պլանային առաջադրանքների, վորը սահմանված է ըստ տեխնոլոգիական պրոցեսի արտադրական ռեժիմի և գործարանի տեխ. ղեկավարի ցուցումների։ Նա պատասխանատու յե իր հերթին առաջադրված արտադրական-տեխնիկական ցուցանիշների կատարման համար։

3) Հերթային վարպետը կոմպլեկտային վարպետի յեվ յենթավարպետի հետ համաձայնեցրած դասավորում է բանուժը ըստ կոմպլեկտների, ընդունելով կոմպլեկտներից աշխատանքը, նա պատասխանատու յե արտադրանքի նշված քանակի ճշտության համար. միջոցներ է ձեռք առնում անպայման կատարելու առաջադրված պլանը։

4) Աշխատանքի վայրում հրահանգում է յենթավարպետներին, բանվորներին, ձեռք է



առնում բոլոր միջոցները վերացնելու թերությունները, արտադրության պարապուրդները, ինչպես նաև ապահովում է աշխատանքի անվտանգությունն իր հերթի ընթացքում։ Հերթի արտադրական առաջադրանքը կատարելու նպատակով վարպետը պարտավոր է հայտաբերել անձնական նախաձեռնություն հում նյութի, ոժանդակ նյութեղենի, արտադրական կահավորման, գործիքների ռացիոնալ ոգտագործման, բանուժի նպատակահարմար դասավորման բնագավառում։ Ապահովել աշխատանքի բարձր արտադրողականություն, արտադրանքի վորակի լավացումը յեվ ինքնարժեքի իջեցումը։

5) Մեքենաների, արտադրական սարքավորման դրության վողջ պատասխանատվությունը հերթի ընթացքում ընկնում է վարպետի վրա։ Նա կազմակերպում է արտադրական սարքավորման, մեքենաների ժամանակին յեվ ճիշտ վերանորոգման գործը և մեքենաները հանձնում է հաջորդ հերթին բարվոք վիճակում։

6) Կազմակերպում է իր հերթում արտադրական նորմաների ու ծրագրերի քննությունն յեվ ապահովում է նրանց կյանքում կիրառելը։

7) Ներկայացնում է ցեխի պետի հաստատմանը իջեցնելու համար վարձաչափն այն բանվորների, վորոնց անխնամ վերաբերմունքի հետեվանքով կարտադրվի վատորակ արտադրանք, ղեկավարվելով վոչ լիարժեք արտադրանքի համար զեղչված վճար տալու մասին գոյություն ունեցող կանոնադրությամբ։ Ներկայացնում է բանվորներին պարգեվատրելու՝ թեկնածուներին աշխատանքի, վորակի լավացման դեպքերում։

8) Վարպետը նշանակվում է ցեխի պետի կողմից գործարանի տեխ. ղեկավարի համաձայնելուց հետո յեվ անմիջականորեն յենթարկվում է ցեխի պետին։

9) Վարպետի կարգադրությունները ցեխի պետի կողմից փոխվելը կամ բեկանվելը պետք է կատարվի միմիայն իրեն՝ վարպետի միջոցով։



10) Վարպետը պարտավոր է գլխավորել սոցմրցումն ու հարվածայնությունը, ստախանովյան շարժումը։ Ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները զարգացնելու յեվ խորացնելու ստախանովյան շարժումը, կազմակերպել առաջավոր ստախանովականների արտադրական-տեխնիկական փորձի փոխանակման գործը։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0196646

381